

ՅԱՌԱՋԱԲԱՆ

PROLOGUE

Մեծ ուրախութեամբ կ'ամբողջացնեմ այս գիրքը, որ շատ-շատոնց պետք է գրուած ըլլար: Հոն արծարծուած կարգ մը նիւթերը իմ հետաքրքրութեան առարկայ եղած են մանկութեան օրերէն, երբ 7 տարեկանիս ծննդավայրի մայր եկեղեցւոյ մէջ դպիր կը դառնայի: Այնուհետեւ, կեանքի զանազան հանգրուաններուն մէջ, զանազան առիթներով, աստուածայինի մասին հարցեր կը յառաջանային եւ անոնց համար համոզիչ պատասխաններ կը պահանջուէին: Վերջաւորութեան, երբ համալսարանի մէջ փիլիսոփայութիւն եւ աստուածաբանութիւն կ'ուսանէի, հարցերը աւելի յստակ, շօշափելի ու առարկայական կը դառնային:

Տասնամեակներ շարունակ, աստուածայինի մասին, մտքիս մէջ մշակուած նիւթերն ու գաղափարները, երբ գրի առնելու սկսայ, նկատեցի որ այնքան ալ հեշտ պիտի չըլլայ եւ հարկ պիտի ըլլայ աւելի խորաթափանց պրպտումներ ու ուսումնասիրութիւններ կատարել: Այդպէս ալ եղաւ:

Աստուածայինի մասին, տարիներու փիլիսոփայական ու աստուածաբանական ուսումնասիրութիւններու աշխատանքս, ինծի համար հետաքրքրական ու ուսանելի ժամանակաշրջան մը եղաւ եւ որպէս արդիւնք, այժմ ունինք ներկայ հատորը, որ ձօնուած է ընտանիքիս երկու արժանապատիւ կղերականներուն.- հօրս՝ Ատոմ աւագ քահանային (1920 – 2002 թ.) եւ եղբօրս՝ Արտակ աւագ քահանային:

Գրքի վերնագրի համար ընտրուած «Աստուածիմաստութիւն» (Theosophia) եզրոյթը սահմանուած է Էջ 4-ի վրայ ապա լայնօրէն բացատրուած է **Մաս-1**, ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ վերնագրի տակ, Էջ 12: Իսկ Աստուած հասկացութիւնը եւ անկէ յառաջացած այլ յղացքներն ու հասկացութիւնները բացատրուած են **Մաս-8**, ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ, [Ծ-07] վերնագրի տակ, Էջ 398-էն սկսեալ:

Գիրքը բաժնուած է ընդհանուր 9 մասերու եւ կը բովանդակէ 572 էջատակի հակիրճ ծանօթագրութիւններ եւ 50 (**Ծ-01 ... Ծ-50**) աւելի ընդարձակ ծանօթագրութիւններ, որոնք կը գրաւեն ամբողջ **Մաս-8**: